

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ
SYSTEM OF NATIONAL ACCOUNTS
СИСТЕМА НАЦИОНАЛЬНЫХ СЧЕТОВ

Ազգային հաշիվների համակարգը (ԱՀՀ) ազատական տնտեսակարգ ունեցող երկրներում մակրոտնտեսական գործընթացների նկարագրման և վերլուծության համար կիրառվող փոխկապակցված ցուցանիշների համակարգ է:

Համակարգի առանցքային ցուցանիշը համարվում է **համախառն ներքին արդյունքը** (ՀՆԱ), որը բնութագրում է երկրում տնտեսության բոլոր ճյուղերում արտադրված ապրանքների և ծառայությունների արժեքը՝ վերջնական սպառման, կուտակման և զուտ արտահանման համար նախատեսվող:

Այս բաժնում ազգային հաշիվների համակարգից բերված են միայն համախառն ներքին արդյունքի ցուցանիշները (մնացած հաշիվները ԼՂՀ-ում դեռևս չեն հաշվարկվում):

ՀՆԱ-ն հաշվարկվում է երեք եղանակներով՝ արտադրական, եկամուտների ձևավորման և եկամուտների օգտագործման (ծախսային) (ներկայումս ԼՂՀ-ում կիրառվում են ՀՆԱ-ի հաշվարկման երկու եղանակներ՝ արտադրական և եկամուտների ձևավորման):

Արտադրական եղանակով ՀՆԱ-ն ստացվում է որպես ապրանքների և ծառայությունների ողջ թողարկման և միջանկյալ սպառման տարբերություն կամ որպես տնտեսությունում ստեղծված ավելացված արժեքի հանրագումար: Ընդ որում, ըստ գործունեության տեսակների ավելացված արժեքի ծավալները հաշվարկվում են հիմնական գներով, որոնք չեն ներառում արտադրանքի հարկերը, սակայն ներառում են արտադրանքի սուբսիդիաները: Ծուկայական գներով ՀՆԱ-ի հաշվարկման համար անհրաժեշտ է ավելացնել արտադրանքի զուտ (առանց սուբսիդիաների) հարկերը:

Ըստ եկամուտների ձևավորման աղբյուրների ՀՆԱ-ի հաշվարկման եղանակը ԼՂՀ ազգային վիճակագրական

The System of National Accounts (SNA) is a system of interrelated indicators which are used for description and analysis of macroeconomic processes in countries with market economy.

The key indicator of the system is the **Gross Domestic Product (GDP)**, which characterizes the value of goods and services produced in all branches of the economy and is intended for final consumption, capital formation and net exports.

This part gives only the GDP indicators from the SNA (other accounts are not calculated in NKR yet).

GDP is calculated by three methods: from the production side, from the use side, and through sources of incomes (GDP can be calculated in NKR in two ways: from production side, and through sources of incomes).

GDP calculated with the production method is the difference between the output of goods and services for the whole country, on the one hand, and intermediate consumption, on the other hand, or the sum of values added created in the economy. The values added by activities are here calculated at basic prices, i.e. excluding taxes on products, but including subsidies on products. To calculate GDP at market prices, net taxes (less subsidies) on products are required to be added.

The method of constructing GDP through sources of incomes is one of the two methods used by the National Statistical Service of the Republic of

Система национальных счетов (СНС) – система взаимосвязанных показателей, применяемая для описания и анализа макроэкономических процессов в странах с рыночной экономикой.

Ключевым показателем системы является **валовой внутренний продукт** (ВВП), характеризующий стоимость товаров и услуг, произведенных в стране во всех отраслях экономики и предназначенных для конечного потребления, накопления и чистого экспорта.

В данном разделе из системы национальных счетов представлены только показатели валового внутреннего продукта (остальные счета в НКР пока не рассчитываются).

ВВП рассчитывается тремя методами: производственным, методом формирования ВВП по источникам доходов и методом использования доходов (расходным) (в НКР ВВП рассчитывается двумя методами: методом производства и методом формирования доходов).

ВВП при расчете производственным методом получается как разность между выпуском товаров и услуг в целом по стране, с одной стороны, и промежуточным потреблением – с другой, или как сумма добавленных стоимостей, создаваемых в экономике. При этом, объемы добавленной стоимости по видам экономической деятельности рассчитываются в основных ценах, то есть, не включающих налоги на продукты, но включающих субсидии на продукты. Для расчета ВВП в рыночных ценах необходимо добавить чистые (за вычетом субсидий) налоги на продукты. **Метод формирования ВВП** по источникам доходов является одним из двух методов исчисления ВВП, применяемых

ծառայությունում կիրառվող ՀՆԱ-ի հաշվարկման երկու եղանակներից մեկն է: Սակայն դա անկախ հաշվարկ չի համարվում, քանի որ ընդունված մեթոդաբանության համաձայն, եկամտային ոչ բոլոր ցուցանիշներն են ստացվում ուղղակի հաշիվներից, դրանց մի մասը հաշվարկվում է հաշվեկշռման եղանակով:

Ըստ եկամտատների աղբյուրների, համախառն ներքին արդյունքի ձևավորումն արտացոլում է անմիջապես արտադրական գործընթացին մասնակցող միավորների, ինչպես նաև պետական հիմնարկների և տնային տնտեսությունները սպասարկող ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ստացած սկզբնական եկամուտները: Այս հաշվարկներում համախառն շահույթը (համախառն խառը եկամուտը) հանդիսանում է հաշվեկշռող հոդված և որոշվում է որպես արտադրական եղանակով հաշվարկված համախառն ներքին արդյունքի (շուկայական գներով) և աշխատողների աշխատանքի վարձատրության ու արտադրության և ներմուծման զուտ հարկերի տարբերություն:

Նշված եղանակը կիրառվում է ոչ թե՛ ՀՆԱ-ի անվանական ծավալի կամ դինամիկայի որոշման, այլ միայն դրա արժեքային կառուցվածքի վերլուծության համար:

Արտադրության հաշիվն արտացոլում է անմիջականորեն արտադրական գործընթացին վերաբերող գործառնությունները: Այս հաշվում որոշվում է համախառն ներքին արդյունքի հաշվարկման հիմքը հանդիսացող ավելացված արժեքը:

Թողարկումն իրենից ներկայացնում է հաշվետու տարում տնտեսությունում արտադրված ապրանքների և ծառայությունների ընդհանուր արժեքը:

Միջանկյալ սպառումը կազմված է այն ապրանքների ու ծառայությունների արժեքից, որոնք հաշվետու ժամանակաշրջանում ամբողջությամբ սպառվում կամ վերափոխվում են

Nagorno-Karabakh to calculate GDP. But it is not independent because not all indicators of incomes can be measured directly and some of them are calculated with the balance method.

The calculation of Gross Domestic through sources of incomes reflects primary incomes receivable by entities directly involved in the process of production, as well as by general government and non-profit institutions serving households. The gross operating surplus (gross mixed income) is a balancing item, which is defined as the difference between the Gross Domestic Product, at market prices, calculated by the production method and compensation of employees and net taxes on production and imports.

This method is only used to analyse the value structure of GDP, but not to determine its nominal volume or change.

Production account records transactions directly linked to the production process. In this account the value added is defined, which serves as a basis for calculating the Gross Domestic Product.

Output is the value of goods and services produced in the economy during the reported year.

Intermediate consumption is equal to the value if goods and services, transformed or consumed in the current process of production. The intermediate consumption does not include consumption of fixed capital.

Национальной статистической службой НКР. Однако, он не является самостоятельным, поскольку в соответствии с принятой методологией не все показатели доходов получаются путем прямого счета, часть из них исчисляется балансовым методом.

Формирование валового внутреннего продукта по источникам доходов отражает первичные доходы, получаемые единицами, непосредственно участвующими в производстве, а также государственными учреждениями и некоммерческими организациями, обслуживающими домашние хозяйства. В этом расчете валовая прибыль (валовой смешанный доход) является балансирующей статьей и определяется как разница между валовым внутренним продуктом, рассчитанным производственным методом в рыночных ценах, оплатой труда работников и чистыми налогами на производство и на импорт.

Данный метод используется для анализа стоимостной структуры ВВП, а не для определения его номинального объема или динамики.

Счет производства отражает операции, относящиеся непосредственно к процессу производства. В этом счете определяется добавленная стоимость, составляющая основу исчисления валового внутреннего продукта.

Выпуск представляет собой суммарную стоимость товаров и услуг, произведенных в экономике в отчетном периоде.

Промежуточное потребление состоит из стоимости товаров и услуг, которые трансформируются или полностью потребляются в процессе

արտադրության ընթացքում: Միջանկյալ սպառման մեջ չի մտնում հիմնական կապիտալի սպառումը:

Միջանկյալ սպառման կազմում առանձին դիրքով ներառվում են ֆինանսական միջնորդների (բանկների) անուղղակիորեն չափվող ծառայությունների:

Համախառն ավելացված արժեքը հաշվարկվում է ըստ տնտեսական գործունեության տեսակների որպես ապրանքների և ծառայությունների թողարկման ու միջանկյալ սպառման տարբերություն: «Համախառն» տերմինը ցույց է տալիս, որ ցուցանիշն իր մեջ ներառում է հիմնական կապիտալի արժեքի սպառումն արտադրության գործընթացում:

Արտադրության և ներմուծման գուտ հարկերը ներառում են արտադրանքի և ներմուծման հարկերը, արտադրության այլ հարկերը:

«Զուտ» տերմինը նշանակում է, որ հարկերը ցույց են տրվում առանց համապատասխան սուբսիդիաների:

Արտադրանքի հարկերը ներառում են այն հարկերը, որոնց չափերն ուղղակիորեն կախված են թողարկված արտադրանքի և մատուցված ծառայությունների արժեքից: Դրանց թվին են դասվում ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը և այլն: Ներմուծման հարկը ներմուծվող ապրանքներից և ծառայություններից գանձվող հարկն է:

Սուբսիդիաները պետական բյուջեից որոշակի ապրանքների և ծառայությունների արտադրության նպատակով կազմակերպություններին տրամադրվող անհատույց ընթացիկ վճարներն են:

Արտադրության այլ հարկերը բաղկացած են այն բոլոր հարկերից, որոնցով հարկվում են արտադրող միավորներն արտադրության գործընթացի կամ արտադրության գործոնների օգտագործման հետ կապված, բացի ապրանքների հարկերից: Այդպիսի հարկերի չափերն ուղղակիորեն կախված չեն արտադրության ծավալներից և

Intermediate consumption also covers payments of financial intermediation services indirectly measured.

Gross value added is calculated at the level of economy activities as the value of output of goods and services less the value of intermediate consumption.

The term “Gross” means, that the value added includes the value of fixed capital consumed in the process of production.

Net taxes on production and imports include taxes on products and imports and other taxes on production.

The term “Net” means that taxes are shown excluding related subsidies.

Taxes on products include taxes which directly depend on the value of goods produced and services rendered. Taxes on products include: value added tax (VAT), excise tax, etc. Taxes on imports are those levied on imported goods and services.

Subsidies are current noncompensable payments from the State budget to enterprises provided to those enterprises which are producing particular goods and services.

Other taxes on production consist of all taxes, except taxes on products, payable by enterprises in connection with their participation in the production process. The rates of these taxes do not directly depend on the volume and profitability of production.

They do not include taxes on profit or other incomes received by enterprises. Other taxes on production

производства в отчетном периоде. Потребление основного капитала не входит в состав промежуточного потребления.

В состав промежуточного потребления включается отдельной позицией потребление косвенно измеряемых услуг финансового посредничества (банков).

Валовая добавленная стоимость исчисляется на уровне видов экономической деятельности как разность между выпуском товаров и услуг и промежуточным потреблением. Термин “валовая” указывает на то, что показатель включает потребленную в процессе производства стоимость основного капитала.

Чистые налоги на производство и импорт включают налоги на продукты и на импорт и другие налоги на производство.

Термин “чистые” означает, что налоги показаны за вычетом соответствующих субсидий.

Налоги на продукты включают налоги, размер которых прямо зависит от стоимости произведенной продукции и оказанных услуг. К налогам на продукты относятся: налог на добавленную стоимость, акцизы и др. Налоги на импорт – это налоги на импортируемые товары и услуги.

Субсидии – текущие некомпенсированные выплаты из государственного бюджета организациям при условии производства ими определенного вида товаров и услуг.

Другие налоги на производство состоят из всех налогов, которыми облагаются производящие единицы в связи с их производством или использованием факторов производства, кроме налогов на продукты. Размер таких налогов прямо не зависит от объема и рентабельности производства. Они не включают также любые

շահութաբերությունից: Դրանք չեն ներառում նաև կառուցվածքային միավորների ստացած շահույթի կամ այլ եկամուտների վրա ցանկացած հարկերը: Արտադրության այլ հարկերից են բնական պաշարների օգտագործման համար վճարները (բնապահպանության վճար), հողի, արտադրության մեջ օգտագործվող շենքերի ու շինությունների (անշարժ գույք) պարբերական հարկերը, արտոնագրային վճարները, պետական տուրքերը և այլն:

Եկամուտների ձևավորման հաշիվը հանդիսանում է եկամուտների սկզբնական բաշխման հաշվի բաղկացուցիչ մասը: Այն արտացոլում է անմիջականորեն ապրանքների ու ծառայությունների արտադրության գործընթացին մասնակցող կառուցվածքային ռեզիդենտ միավորների կողմից վճարված սկզբնական եկամուտները:

Կառուցվածքային միավորը համարվում է երկրի **ռեզիդենտ**, եթե այդ տարածքում է գտնվում դրա տնտեսական շահերի կենտրոնը, այսինքն՝ եթե այն զբաղվում կամ նախատեսում է զբաղվել տնտեսական գործունեության որևէ տեսակով կամ գործառնություններով երկար ժամանակահատվածում, սովորաբար այն հավասարեցվում է մեկ տարվա:

Աշխատողների աշխատանքի վարձատրությունը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանում վարձու աշխատողներին կատարված աշխատանքների համար գործատուի կողմից դրամական կամ բնեղեն ձևով վճարված բոլոր վարձատրությունների գումարով: Աշխատողների աշխատանքի վարձատրությունը հաշվառվում է հաշվեգրված գումարներով և իր մեջ ընդգրկում է նաև եկամտային հարկը և այլ վճարները, որոնք ենթակա են վճարման աշխատողների կողմից:

Նամխառը (զուտ) շահույթն իրենից ներկայացնում է ավելացված արժեքի այն մասը, որը մնում է արտադրողներին վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության և արտադրության հարկերի վճարման հետ կապված ծախսերը կա-

include taxes on use of natural resources (environment tax), payments for land (land on tax), licenses, state duties and levies payable by enterprises and organizations, real-estate tax.

Generation of income account is a constituent element of primary distribution of income accounts. It reflects primary incomes payable by resident institutional units directly engaged in the process of production of goods and services.

An institutional unit is considered to be **resident** within a country when it has a centre of economic interest in that territory, i.e. is engaged or is going to get engaged in some economic activities or transactions during a long period, usually assimilated to one year.

Compensation of employees is defined as remuneration, in cash or in kind, payable to employees for work done during the accounting period. Compensation of employees is recorded on the basis of gross amounts and includes contributions to social insurance schemes, income tax deductions, and other payments, payable by employees.

Gross (or net) operating surplus of the economy is the part value added which remains with producers after deducting outlays related to the remuneration of employees and taxes on production. The terms “gross” and “net” in this case show if this indicator includes or excludes consumption of fixed capital in the

налоги на прибыль или иные доходы, получаемые институциональной единицей. К другим налогам на производство относятся: налоги за пользование природными ресурсами (экологический налог), плата за землю (земельный налог), плата за патенты, государственная пошлина и сборы, взимаемые с предприятий и организаций, налог на недвижимость.

Счет образования доходов является составной частью счетов первичного распределения доходов. Он отражает выплату первичных доходов институциональными единицами-резидентами, непосредственно участвующими в производстве товаров и услуг.

Институциональная единица считается **резидентом** экономики страны, если она имеет на ее территории центр экономического интереса, то есть, если она занимается или собирается заниматься какими-либо видами экономической деятельности или операциями в течение длительного периода времени, обычно приравниваемого к одному году.

Оплата труда работников определяется суммой всех вознаграждений в денежной или натуральной форме, выплачиваемых работодателями работникам за работу, выполненную ими в течение отчетного периода. Оплата труда работников учитывается на основе начисленных сумм и включает в себя суммы отчислений на налогов на доходы и другие выплаты, которые подлежат уплате работниками.

Валовая (чистая) прибыль представляет собой ту часть добавленной стоимости, которая остается у производителей после вычета расходов, связанных с оплатой труда работников и уплатой налогов на производство. Термин “валовая” или

տարեկուց հետո: «Համախառն» կամ «զուտ» շահույթ արտահայտությունը տվյալ դեպքում ցույց է տալիս, թե արտադրության գործընթացում հիմնական կապիտալի սպառումը հաշվի առնված է նշված ցուցանիշում, թե ոչ:

Տնային տնտեսություններին պատկանող ձեռնարկությունների արտադրական գործունեության արդյունքում ձևավորված շահույթը կոչվում է **համախառն խառը եկամուտ**, քանի որ այն արտացոլում է ինչպես ձեռնարկատիրոջ կողմից կատարած աշխատանքի վարձատրությունը, այնպես էլ ձեռնարկատիրական շահույթը:

Գնահատման սկզբունքները: Համակարգում գնահատումն ընթացիկ գներով իրականացվում է գործառնություններում փաստացի օգտագործված գներով:

ՆԱ-ի արտադրությունն ու օգտագործումը գնահատվում են այն ընթացիկ շուկայական գներով, որոնք գերակշռում են արտադրանքի արտադրության կամ օգտագործման ժամանակահատվածում:

Տնտեսական գործունեության տարբեր տեսակներում արտադրության և եկամտունների ձևավորման կառուցվածքի վրա հարկերի և սուբսիդիաների դրույքաչափերի տարբերության ազդեցությունը չեզոքացնելու համար ցուցանիշները գնահատվում են հիմնական գներով:

Հիմնական գինը արտադրողի միավոր արտադրանքի գինն է, առանց արտադրանքի ցանկացած հարկի, սակայն ներառյալ արտադրանքի սուբսիդիաները:

Ոչ շուկայական ապրանքներն ու ծառայությունները գնահատվում են կամ շուկայում իրագրվող նմանատիպ ապրանքների ու ծառայությունների գներով, եթե դա հնարավոր է որոշել, կամ արտադրության ծախսերով, եթե շուկայական գինը բացակայում է (մասնավորապես այդպես են գնահատվում պետական հիմնարկների և ոչ առևտրային կազմակերպությունների ծառայությունները):

ՆԱ-ի հաշվարկներում արտադրանքի թողարկման,

process of production.

The income created by “unincorporated enterprises” owned by households is called “**Gross mixed income**”, because it reflects both remuneration of work done by the owner of enterprise and entrepreneurial income.

Principles of valuation. In the SNA, valuation is made at current prices used at the moment of transactions.

Production and use of GDP is valued at current market prices ruling in the period of production or use of products.

In order to eliminate the influence of various taxes and subsidies in different types of economic activities on the structure of production and generation of income, indicators are valued at basic prices.

Basic price is the amount receivable by the producer for a unit of product excluding any taxes on products, but including subsidies on products.

Non-market goods and services are valued at market prices of similar goods and services sold at the market when it is possible to determine these, or, by expenditures on production (specifically, services of government and non-profit institutions are valued in this way), when market prices are not available.

In the GDP, output, intermediate consumption, operating surplus and increase in inventories are calculated,

“чистая” в данном случае указывает на то, включает или не включает этот показатель потребление в процессе производства основного капитала.

Прибыль, образующаяся в результате производственной деятельности предприятий, находящихся в собственности домашних хозяйств, носит название **валового смешанного дохода**, поскольку она отражает как оплату работы, выполненной собственником предприятия, так и прибыль от предпринимательства.

Принципы оценки. Оценка в текущих ценах осуществляется в системе по ценам, фактически используемым в операциях.

Производство и использование ВВП оценивается в текущих рыночных ценах, преобладающих в период, к которому относится производство или использование продукции.

Для устранения влияния различных ставок налогов и субсидий в различных видах экономической деятельности на структуру производства и образования доходов показатели приводятся в оценке по основным ценам.

Основная цена - цена, получаемая производителем за единицу продукта, исключая любые налоги на продукты, но с учетом субсидий на продукты.

Нерыночные товары и услуги оцениваются с использованием рыночной цены подобных товаров и услуг, реализуемых на рынке, если ее возможно установить, или по затратам на производство, если рыночная цена отсутствует (в частности, так оцениваются услуги государственных учреждений и некоммерческих организаций).

В расчетах ВВП показатели: выпуск продукции, промежуточное потребление,

միջանկյալ սպառման, շահույթի և նյութական շրջանառու միջոցների պաշարների փոփոխության ցուցանիշները հաշվարկվում են առանց **հոլդինգային շահույթի (վնասի)**, որը ներկայացնում է արտադրանքի այն մեծությունը, որը ձևավորվել է արտադրանքի պահեստում գտնվելու ընթացքում նրա գնի փոփոխության արդյունքում: Սղահի պայմաններում հոլդինգային շահույթը (վնասը) կարող է զգալի լինել:

Համադրելի (նախորդ տարվա) գներով վերագնահատումը կատարվում է ինչպես ըստ արտադրված համախառն ներքին արդյունքի, այնպես էլ ըստ դրա օգտագործման ցուցանիշների: ՀՆԱ-ի արտադրության ցուցանիշների վերագնահատումը համադրելի գներով իրականացվում է կրկնակի դեֆլյատացիայի եղանակի կիրառումով, որի ժամանակ ավելացված արժեքի մեծությունը ստացվում է որպես համադրելի գներով գնահատված թողարկման և միջանկյալ սպառման մեծությունների տարբերություն:

Թողարկման և միջանկյալ սպառման վերագնահատումը համադրելի գներով կատարվում է երկու եղանակներով.

- հաշվետու ժամանակաշրջանի տվյալները դեֆլյատավորելով ընթացիկ գներով համապատասխան գների ինդեքսներով.

- բազային տարվա տվյալները՝ ընթացիկ գներով, իրական ծավալի ինդեքսներով կամ բնեղեն ինդիկատորներով էքստրապոլյացիայի ենթարկելով:

ՀՆԱ-ի օգտագործման ցուցանիշների համադրելի գներով վերագնահատման համար կիրառվում են համապատասխան գների ինդեքսներ (սպառողական գների ինդեքսը, կապիտալ ներդրումների գների ինդեքսը և այլն) և բնեղեն ինդիկատորներ:

ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորն ընթացիկ գներով ՀՆԱ-ի մեծության հարաբերությունն է նախորդ ժամանակաշրջանի համադրելի գներով գնահատված դրա ծավալին: Ի տարբերություն ապրանքների և ծառայությունների գների ինդեքսի՝

excluding holding gains (losses), which are defined as the value of products created due to changes in prices during the period when the products were held in stocks. Holding gains (losses) could be sizeable under the conditions of high inflation .

Revaluation at comparative prices (of previous year) is made for GDP both from the production side and from the use side.

The indicators of the production of GDP are revaluated at comparative prices with the double deflation method where the value added at comparative prices is the difference between the value of output and the value of intermediate consumption at comparative prices.

Revaluation of output and intermediation consumption at comparable prices is made by two methods:

- deflation of data at current prices for the accounting period with corresponding price indices.

- extrapolation of data at current prices for the base year with real volume indices or quantum indices.

To revalue the indicators of use of GDP at constant prices, relevant price indices (consumer price index, capital investments price index, etc.) and quantum indicators were applied.

GDP deflator index is ratio of GDP at current prices to GDP at comparable prices of the previous period.

Unlike the prices index of goods and services, the GDP deflator measures change in compensation of employees, operating surplus (including mixed income), and

прибыль и прироста материальных оборотных средств исчисляются без **холдинговой прибыли (убытка)**, представляющей ту величину стоимости продукции, которая образовалась в результате изменения цен на нее за период нахождения продукции в запасах. В условиях инфляции холдинговая прибыль (убыток) может быть довольно значительной.

Переоценка в сопоставимые (предыдущего года) цены проводится как по произведенному валовому внутреннему продукту, так и по показателям его использования. Переоценка показателей производства ВВП в сопоставимые цены осуществляется с использованием метода двойного дефлятирования, при котором величина добавленной стоимости в сопоставимых ценах получается как разность между стоимостью выпуска и стоимостью промежуточного потребления, оцененными в сопоставимых ценах.

Переоценка выпуска и промежуточного потребления в сопоставимые цены производится с использованием двух методов:

- дефлятированием данных за отчетный период в текущих ценах соответствующими индексами цен:

- экстраполированием данных за базисный год в текущих ценах индексами реального объема или натуральными индикаторами.

Для переоценки в сопоставимые цены показателей использования ВВП применяются соответствующие индексы цен (индекс потребительских цен, индекс цен капитальных вложений и т.п.) и натуральные индикаторы.

Индекс-дефлятор ВВП – отношение ВВП, исчисленного в текущих ценах, к объему ВВП, исчисленного в сопоставимых ценах предыдущего периода. В отличие от индекса цен на товары и услуги дефлятор ВВП характеризует изменение оплаты труда, прибыли (включая

ՆՆԱ-ի դեֆլյատորը բնութագրում է աշխատանքի վարձատրության, շահույթի (ներառյալ խառը եկամուտները), հիմնական կապիտալի սպառման փոփոխությունները գների փոփոխման արդյունքում, ինչպես նաև զուտ հարկերի անվանական ծավալի փոփոխությունը:

consumption of fixed assets arisen from changes in prices and nominal net taxes.

смешанные доходы) и потребления основного капитала в результате изменения цен, а также номинального объема чистых налогов.

123. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ
ECONOMIC INDICATORS
ЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով) Domestic product (gross, market prices)								Внутренний продукт (валовой, в рыночных ценах)
մլն. դրամ mln. drams	118187.2	135498.5	150015.7	168563.6	188840.3	209345.7	229651.6	млн. драмов
հազ. ԱՄՆ դոլար thsd. US dollars	316304.6	363764.1	373368.4	411502.1	454030.3	438035.0	477952.9	тыс. долларов США
Համախառն ներքին արդյունքի իրական ծավալի ինդեքսը, նախորդ տարվա նկատմամբ, % Real volume index of gross domestic product, as % of previous year	105.5	109.1	109.9	109.3	108.9	109.1	109.2	Индекс реального объема валового внутреннего продукта, к предыдущему году, %
Դեֆլատոր, նախորդ տարվա նկատմամբ % Deflator, as % of previous year	109.5	105.1	100.7	102.8	102.9	101.6	100.5	Дефлятор, к предыдущему году, %
Համախառն ներքին արդյունքը մեկ շնչի հաշվով Gross domestic product per capita								Валовой внутренний продукт на душу населения
հազ. դրամ thsd. drams	823.2	936.1	1023.0	1174.7	1308.7	1443.8	1577.3	тыс. драмов
ԱՄՆ դոլար US dollars	2203.1	2513.1	2546.1	2867.7	3146.5	3021.0	3282.7	долларов США
Դոլարի հաշվարկային փոխարժեքը, դրամ, 1 ԱՄՆ դոլարի հաշվով Dollar rate, drams for 1 US dollar	373.65	372.49	401.79	409.63	415.92	477.92	480.49	Курс доллара, драмов, за 1 доллар США

124. ՀԱՄԱՊԱՏՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ
GROSS DOMESTIC PRODUCT
ВАЛОВОЙ ВНУТРЕННИЙ ПРОДУКТ

(շուկայական գներով, մլն դրամ)
 (at market prices, mln. drams)

(в рыночных ценах, млн. драмов)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
Համախառն ներքին արդյունքը Gross domestic product	118187.2	135498.5	150015.7	168563.6	188840.3	209345.7	229651.6	Валовой внутренний продукт
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) Taxes on products (minus subsidies)	9631.7	10242.1	11030.1	9354.3	11907.1	11036.1	9776.7	Налоги на продукты (за вычетом субсидии)
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) Value added (gross, at basic prices)	108555.5	125256.4	138985.6	159209.3	176933.2	198309.6	219874.9	Добавленная стоимость (валовая, в основных ценах)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ(-) indirectly measured services of financial intermediation(-)	4791.0	6679.6	8068.3	8402.3	9861.4	10664.5	11051.8	Косвенно измеряемые услуги финансового посредничества (-)

125. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԵՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ (ընթացիկ գներով)

**STRUCTURE OF PRODUCTION OF GROSS DOMESTIC PRODUCT (at current prices)
СТРУКТУРА ПРОИЗВОДСТВА ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА (в текущих ценах)**

(տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)
(in percents to total)

(в процентах к итогу)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
Համախառն ներքին արդյունքը (շուկայական գներով) Gross domestic product (at market prices)	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	Валовой внутренний продукт (в рыночных ценах)
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) Taxes on products (minus subsidies)	8.1	7.5	7.4	5.5	6.3	5.3	4.3	Налоги на продукты (за вычетом субсидии)
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) Value added (gross, at basic prices)	91.9	92.5	92.6	94.5	93.7	94.7	95.7	Добавленная стоимость (валовая, в основных ценах)
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ(-) indirectly measured services of financial intermediation (-)	4.0	4.9	5.4	5.0	5.2	5.1	4.8	косвенно измеряемые услуги финансового посредничества (-)

126. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆԵՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

**CHANGES OF GROSS DOMESTIC PRODUCT
ИЗМЕНЕНИЕ ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА**

(տոկոսներով՝ նախորդ տարվա նկատմամբ)
(in percent to previous year)

(в процентах к предыдущему году)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
Համախառն ներքին արդյունքը շուկայական գներով Gross domestic product (at market prices)	105.5	109.1	109.9	109.3	108.9	109.1	109.2	Валовой внутренний продукт (в рыночных ценах)
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) Taxes on products (minus subsidies)	106.6	105.8	109.5	84.3	129.3	83.3	76.3	Налоги на продукты (за вычетом субсидии)
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) Value added (gross, at basic prices)	105.4	109.3	109.9	111.2	107.7	110.8	111.0	Добавленная стоимость (валовая, в основных ценах)
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ indirectly measured services of financial intermediation	134.5	136.8	124.7	103.6	116.9	107.0	101.1	косвенно измеряемые услуги финансового посредничества

127. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇԻՎ (ընթացիկ գներով)
PRODUCTION ACCOUNT (at current prices)
СЧЕТ ПРОИЗВОДСТВА (в текущих ценах)

(մլն դրամ)
 (mln. drams)

(млн. драм)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
Ռեսուրսներ Resources								Ресурсы
Թողարկում հիմնական գներով Output at basic prices	204413.5	230654.5	252659.1	278109.7	313653.1	395896.7	371001.9	Выпуск в основных ценах
Արտադրանքի հարկեր Taxes on products	9753.1	10392.4	11180.4	10051.2	13474.0	12790.4	12441.2	Налоги на продукты
Արտադրանքի սուբսիդիաներ (-) Subsidies on products(-)	121.4	150.3	150.3	696.9	1566.9	1754.3	2664.5	Субсидии на продукты (-)
Ընդամենը Total	214045.2	240896.6	263689.2	287464.0	325560.2	406932.8	380778.6	Всего
Օգտագործում Uses								Использование
Միջանկյալ սպառում Intermediate consumption	95858.0	105398.1	113673.5	118900.4	136719.9	197587.1	151127.0	Промежуточное потребление
Համախառն ներքին արդյունքը (շուկայական գներով) Gross domestic product (at market prices)	118187.2	135498.5	150015.7	168563.6	188840.3	209345.7	229651.6	Валовой внутренний продукт (в рыночных ценах)
Ընդամենը Total	214045.2	240896.6	263689.2	287464.0	325560.2	406932.8	380778.6	Всего

128. ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՇԻՎ (ընթացիկ գներով)
GENERATION OF INCOME ACCOUNT (at current prices)
СЧЕТ ОБРАЗОВАНИЯ ДОХОДОВ (в текущих ценах)

(մլն դրամ)
 (mln. drams)

(млн. драм)

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
Ռեսուրսներ Resources								Ресурсы
Համախառն ներքին արդյունքը շուկայական գներով Gross domestic product at market prices	118187.2	135498.5	150015.7	168563.6	188840.3	209345.7	229651.6	Валовой внутренний продукт в рыночных ценах
Ընդամենը Total	118187.2	135498.5	150015.7	168563.6	188840.3	209345.7	229651.6	Всего
Օգտագործում Uses								Использование
Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն Compensation of employees	59330.9	68357.1	77184.9	87501.7	98237.5	106703.4	114543.7	Оплата труда наемных работников
Արտադրության և ներմուծման հարկեր Taxes on production and import	9981.3	10632.0	11445.9	10336.0	13736.5	13052.5	12747.8	Налоги на производство и на импорт
այդ թվում of which:								в том числе:

	2010	2011	2012	2013	2014	2015	2016	
արտադրանքի հարկեր taxes on products	9753.1	10392.4	11180.4	10051.2	13474.0	12790.4	12441.2	налоги на продукты
արտադրության այլ հարկեր other taxes on production	228.2	239.6	265.5	284.8	262.5	262.1	306.6	другие налоги на производство
Արտադրության և ներմուծման սուբսիդիաներ (-) Subsidies on production and imports (-)	121.4	150.3	150.3	696.9	1566.9	1754.3	2664.5	Субсидии на производство и на импорт (-)
այդ թվում՝ of which:								в том числе:
արտադրանքի սուբսիդիաներ subsidies on products	121.4	150.3	150.3	696.9	1566.9	1754.3	2664.5	субсидии на продукты
Տնտնության համախառն շահույթ և համախառն խառը եկամուտներ Gross profit of economy and gross mixed incomes	48996.4	56659.7	61535.2	71422.8	78433.2	91344.1	105024.6	Валовая прибыль экономики и валовые смешанные доходы
այդ թվում՝ of which:								в том числе:
հիմնական կապիտալի սպառում consumption of fixed capital	9010.8	10422.9	11536.0	15323.6	18391.8	24270.9	31646.6	потребление основного капитала
տնտնության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ net profit of economy and net mixed incomes	39985.6	46236.8	49999.2	56099.2	60041.4	67073.2	73378.0	чистая прибыль экономики и чистые смешанные доходы
Ընդամենը Total	118187.2	135498.5	150015.7	168563.6	188840.3	209345.7	229651.6	Всего

129. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ
PRODUCTION OF GROSS DOMESTIC PRODUCTS ECONOMIC ACTIVITIES
 ПРОИЗВОДСТВО ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА ПО ВИДАМ ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ


(մլն դրամ)
(mln. drams)

(млн. драм)

	2014	2015	2016	
Համախառն ներքին արդյունք Gross domestic product	188840.3	209345.7	229651.6	Валовой внутренний продукт
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) Taxes on products (minus subsidies)	11907.1	11036.1	9776.7	Налоги на продукты (за вычетом субсидии)
Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) Value added (gross, at basic prices)	176933.2	198309.6	219874.9	Добавленная стоимость (валовая, в основных ценах)
Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններ (-) indirectly measured services of financial intermediation	-9861.4	-10664.5	-11051.8	Косвенно измеряемые услуги финансового посредничества

	2014	2015	2016	
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն Agriculture, hunting, forestry and fishing	24889.2	27925.1	30302.5	Сельское хозяйство, лесное хозяйство и рыболовство
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում Mining and quarrying	9431	9010.5	12539.1	Горнодобывающая промышленность, разработка открытых карьеров
Մշակող արդյունաբերություն Manufacturing	7985.8	8715.9	7928.2	Обрабатывающие промышленность
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում Electricity, gas steam and air conditioning supply	13925.6	15970.1	17631.0	Обеспечение электроэнергией, газом, паром и кондиционированным воздухом
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում Water supply, sewerage, waste management and remediation activities	444.4	665.3	602.9	Водоснабжение, канализация, очистка, обработка отходов и получение вторичного сырья
Շինարարություն Construction	27354.2	27749	26437.2	Строительство
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում Wholesale and retail trade; repair of motor vehicles, motorcycles	1854.3	1863.4	1737.8	Оптовая и розничная торговля, ремонт автомобилей и мотоциклов
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն Transportations and warehouse economy	622.8	861.6	1310.9	Перевозки и складское хозяйство
Կացության և հանրային սննդի կազմակերպում Accommodation and food service activities	423.6	421.7	614.9	Организация проживания и общественного питания
Տեղեկատվություն և կապ Information and communication	7057.6	7357.3	6965.5	Информация и связь
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն Financial and insurance activities	14245.5	16635.4	20933.4	Финансовая и страховая деятельность
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն Real estate activities	802	941.5	1288.9	Операции с недвижимым имуществом
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն Professional, scientific and technical activities	918	1280	1324.5	Профессиональная, научная и техническая деятельность
Վարչարարական և օժանդակ գործունեություն Administrative and support service activities	1009.5	1213.8	1616.7	Административная и вспомогательная деятельность
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն Public administration	48983.3	57764.5	67551.7	Государственное управление и оборона, обязательное социальное страхование
Կրթություն Education	15963.2	17115.3	17397.6	Образование
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում Human health and social work activities	9428.2	11282.1	11349.2	Здравоохранение и социальное обслуживание населения
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ Arts, entertainment and recreation	1179.2	1343.7	2358.9	Искусство, развлечения и отдых
Սպասարկման այլ ծառայություններ Other service activities	277.2	279.3	457.2	Другие услуги в сфере обслуживания
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու, տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար Activities of private house-holds as employers undifferentiated production and services activities of private households for own consumption	--	578.6	578.6	Деятельность домашних хозяйств с наемными работниками, производство домашних хозяйствами разнообразных товаров и услуг для собственного потребления

Հ ԱՄԱՆԱՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԱՃԻ ՏԵՄՊԵՐՈՐ (ՏՈԿՈՄՆԵՐՈՎ՝ ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՆԿԱՏՄԱՄԲ)
THE RATES OF DEVELOPMENT GROSS DOMESTIC PRODUCT (IN PERCENT TO PREVIOUS YEAR)
ТЕМПЫ РОСТА ВАЛОВОГО ВНУТРЕННЕГО ПРОДУКТА (В ПРОЦЕНТАХ К ПРЕДЫДУЩЕМУ ГОДУ)



ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՇՎ (տոկոսներով ՀՆԱ-ի նկատմամբ)
GENERATION OF INCOME ACCOUNTS (in percents to GDP)
СЧЕТ ОБРАЗОВАНИЯ ДОХОДОВ (к ВВП,%)

